



Հակոբ Պարոնյան

Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ

Ա.

ՄԻՋԱԳԻԻՂ

Նախ եւ առաջ հարկ է գիտնալ, որ այս գիւղը մտնելու համար քանի մը դժուարութիւններ կան խօսքս պատուաւոր մարդերու համար է եւ ո՛չ գողերու համար իսկ անկէ ելնելու համար դժուարութիւններն ասելի մեծ են. արեւելեան խնդրոյն ձեռով շինուած գիւղ մ' է: Եթէ նաւամատոյցին ճամբայէն մտնել ուզես՝ վեց հոյակապ ճեմիշներու հոտը քթիդ ուշադրութիւնը կգրաւեն, եւ անմիջապէս կը համոզուիս, որ Միջագիւղ բնակողի մը համար պզտիկ քիթ մը մեծ փորձանք է: Եթէ լերան կողմէ իջնել փորձես՝ փրկանքդ հետոյ տանելու ես, որ եթէ գողերէ բռնուիս՝ կարենաս օձիքդ ազատել: Իսկ եթէ Պէշիկթաշի կողմէն գաս՝ աչերդ թաշկինակով մը կապելու ես, որ հովն անցեալ տարուան հրդեհէն մնացած մոխիրներն աչերուդ չփշէ: Այս գիւղին մէջ մտնելու ապահով ճամբան օդապարհկով հոն իջնելն է, կ' ըսեն, իսկ ինձի համար հոն մտնելու ամենէն ապահով ճամբան հոն բնաւ չմտնելն է :

Այս գիւղին մէջ հինգ հարիւր քսան տուն կայ հայո. սակայն ասոնց մէջ կան տուներ, որք երկու եւ երեք ընտանիքներէ բնակուած են: Եթէ գործերն այսպէս շարունակուին՝ քսան ընտանիք մէկ տան մէջ պիտի բնակին եւ վիճակագիրները տուն համրելու տեղ սենեակ պիտի համրեն :

Երկու եկեղեցի կայ. միոյն անուն Աստուածածին է, իսկ միւսինը Լուսաւորիչ: Գիւղիս Աստուածածինը սահմանադրական չէ, ամեն այցելուները միեւնոյն

եղանակով շրնդունիր. հարուստ այցելու մը տաճարէն ներս մտնելուն պէս՝ ժամակոչ եղբայրները իրար կ'անցնին աթոռ մը գտնելու եւ հիւրին քովը դնելու համար. իսկ երբ այցելուն աղքատ է՝ հրաման կ'ընդունի գետնի վրայ աղօթելու: Հարուստները Ս. Ջատկին կամ Ծնունդին միայն կու գան եկեղեցին, եւ շատ անգամ ալ անձամբ չկրնալով ներկայ գտնուիլ՝ իրենց այցետոմսը կողկեն եկեղեցին :

Այս եկեղեցոյն վերնատունէն ամեն տարի տեղ կ'ծախուի կամ վարձու կտրուի թէպէտեւ լրագիրներու մէջ ծանուցում չըլլար. արդէն հարուստ տիկիները ամբողջ վերնատունը ծախու առած են, եւ տօնի օրերը մէյ - մէկ պահապան կնիկ կողկեն հոն, որպէս զի իրենց տեղը պաշտպանեն օտար կիներու յարձակումներու դէմ: Արդեօք ժամանա՞կն է յիշել Աւետարանին այս խօսքը. Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, եւ դուք արարիք զսա այրս աւագակաց : Լուսատրիչը ժողովրդական է, այր եւ կին՝ խառն կնտնեն տաճարն, բայց Լուսատրիչն, այրերուն վրայ վստահութիւն չունենալուն համար թերեւս, եկեղեցոյն աջ կողմն այրերուն տուած է եւ ձախն կիներուն ... Ո՞վ կարող է պնդել, թէ մեր երեսփոխանական ժողովն ալ այնպէս վարուած չէ. թո՛ղ չարամիտներն պարզամիտ ժողովրդեան հաւատացնել ուզեն, թէ երեսփոխանական ժողովն միայն կիները ներս առած է եւ այրերը դուրս ձգած է. ես չեմ հաւատար :

Ս. Աստուածածնայ եկեղեցոյն դէմն է Թարգմանչաց վարժարանն, որ շատ կանոնաւոր խեղճութեան մէջ կ'գտնուի, եւ եթէ ոչ իւր խեղճութեամբը, գոնէ իւր կանոնաւորութեամբը կարող է ազգային Վարչութեան նախանձը շարժել: Շատերը կ'զարմանան, թէ ասանկ հարուստ թաղի մը վարժարանն ինչո՞ւ աղքատ մնայ: Ես չեմ զարմանար: Վարժարանն անոր համար աղքատ է, որովհետեւ թաղին մէջ հարուստներ կան :

Գիղիս մէջ կայ Հոփսիմեանց վարժարան մը, որ խնամակալուի տիկիներու տնօրէնութեան տակ կ'կառավարուի եւ յոյս կու տայ, որ օր մը ուսեալ եւ կրթեալ աղջիկներ դուրս պիտի տայ: Սոյն վարժարանին սանուհիները բաւական յաջողութեամբ կը թարգմանեն գրաբարէ աշխարհաբար, եւ եթէ Սովետոց Յանձնաժողովոյ ատենադպիրին գրաբար նամակները չեն կրնար լուծել՝

յանցանքն իրենց չէ, վասնզի իրենց դասատուն անգամ շատ անգամ ըղեղը կպատառէ՝ այդ նամակներէ իմաստ մը հանելու համար :

Պ. Շաշեան, որ Հայաստանի մէջ սովոր պատճառած աղէտքներուն վրայ ժողովրդեան գուրջը շարժելու եւ անկէ նուէր հաւաքելու նպատակաւ նամակներ կհրատարակէ լրագիրներու մէջ՝ հասարակութեան անհասկանալի լեզուով կխմբագրէ իւր սաւառնաթեւ նամակները, որպէսզի մեր ազգայիններն իրենց եղբայրներուն տառապանքներն իմանալով չտխրին եւ չլան: Այս տեսակով Պ. Ատենադպիրն ազատ էր լատիներէն ալ խօսիլ ժողովրդեան ... :

Աղջիկներու վարժարան մ' ալ կայ, գոր Ազգանուէր Հայուհեանց ընկերութիւնը բացած է՝ աղքատ աղջիկներու ձրի դաստիարակութիւն տալու համար: Կարողութիւն եւ յաջողութիւն կնադթենք սոյն ընկերութեան ազնուասիրտ տիկիներուն, որ ամեն ջանք ի գործ կդնեն իրենց նպատակին հասնելու համար ... Եթէ այս կիներն այր, եւ իրենց այրերը կին ըլլային՝ անշուշտ Թարգմանչաց վարժարանն այսպէս դժբախտ տեսնելու դժբախտութիւն չէինք ունենար :

Լուսաւորչեան վարժարանն գոհացուցիչ է առ այժմ, սակայն միշտ հսկումի պէտք ունի, որ անընդհատ յարատեւէ իւր կանոնաւորութեանը մէջ :

Հայկական կրթարան անուամբ գիշերօթիկ եւ ցերեկեայ վարժարան մը, որու տնօրէնն է Պ. Գուրգէն, ամեն արգելքներու եւ ձախորդութիւններու դէմ դնելով՝ այսօր խիստ կանոնաւոր վիճակի մէջ մտած է: Ահա գիղիս ամենէն մեծ շէնքն եւ մարդը :

Հոս է Բարեսիրաց ընկերութեան թատրոնն, որու անունն անշուշտ հազար անգամ կարդացած ես փողոցի պատերուն վրայ: Այս թատրոնի մէջ կներկայացուին ժամանակաւ անմահ Պէշիքթաշեանի եւ մահկանացու Հէքիմեանի ողբերգութիւններն, որոնց նմաններն այժմ պարզեւաբաշխութեան օրերը վարժարաններու մէջ կներկայացուին ի մեծ ձանձրութիւն հանդիսականներու: Այս թատրոնին մէջ է, որ այժմ շատերը ատենաբանութիւններ կ'ընեն ժողովրդեան օգտակար նիւթերու վրայ: Անուրանալի ճշմարտութիւն մ'է, որ Միջագիղ ամեն թաղէ առաջ սկսած է լուսաւորեալ ազգերու նմանիլ աշխատելու եւ... շյաջողելու... քանի որ նմանիլը՝ ըլլալ չէ. միշտ պիտի յիշեն

կապիկին առակը :

Այս թաղը խաղաղասէր է. պատրիարքներու փոփոխութիւններու ժամանակ բնաւ կարծիք յայտնած չէ: Օր մը եկեղեցոյն մէջ լսուած չէ. յիշուի, չյիշուի: Կ'երեւի, որ միջագիւղցին եկող պատրիարքէն ալ գոհ է, գացողէն ալ, կամ ո՛չ եկողէն գոհ է եւ ոչ ալ գացողէն: Նոյն - իսկ թաղային գործերուն մէջ ալ չէգործութիւն կ'պահէ. ուրիշ թաղերու մէջ շաբաթը մէկ անգամ թաղականի կոնի կ'ծագի, հոս մինչեւ հիմա աստանկ բան մը պատահած չէ: Հոս ելնող թաղականներէն հաշիւ փնտռելու գէշ սովորութիւն ալ չկայ. գեղացին իրարու վրայ մեծ վստահութիւն ունի :

Պգտիկ երիտասարդութիւն մը կայ, որ ընկերութիւններ կ'ազմելով լուծելով՝ ազգին իրական ծառայութիւններ կ'փափաքի մատուցանել: Մինչեւ հիմա հարիւր ընկերութիւն կ'ազմուած եւ հարիւր յիսուն ընկերութիւն լուծուած է. իսկ հիմայ կայ Արեւստական ընկերութիւն մը, որ հաստատ քայլերով ճամբայ կ'առնէ եւ որուն նպատակն է Հայաստանի մէջ արեւստ տարածել :

Գիւղիս ազգայինները քանի մը դասերու կ'բաժանուին :

Դաս մը կայ, որ միայն դիւանագիտական խնդիրներով կ'զբաղի: Այս դասն երբ գինետուն մտնէ եւ իւր առջեւ ունենայ օղիի շիշը՝ կ'փափաքի գիտնալ, թէ Կլատսքըն ի՛նչ խօսած է Արեւելեան խնդրոյն վրայ, թէ Պիսմարք ի՛նչ ընթացք պիտի բռնէ, թէ Քումանտորիոս ի՛նչ գրած է Ղեոր դ իոսին, եւ մինչեւ որ ասոնց գոհացուցիչ պատասխանները չառնէ՝ գինետունէն դուրս չելներ :

Միւս դասը դիւանագիտական խնդիրներէ ձանձրոյթ կ'զգայ. իրեն համար գիտնալու առաջին խնդիրն այն է, թէ օղիի վրայ աղած ձո՞ւկ ուտելու է, մի՞ս թէ պտուղ. ահաւասիկ իրեն համար բարենորոգման խնդիր ... :

Դաս մ'ալ կայ, որ ամբողջ օրեր վարսավիրայի խանութներու առջեւ կ'պտըտի, որոշում տալու համար, թէ ի՛նչ ձեւ տալու է մագերուն, որ օրիորդին հաճելի երեւնայ եւ իւր առջեւէն չվռնտուի :

Թեթև դաս մ' ալ կայ, որու վրայ թեթևութիւնը ծանրացած է. երբ ծանրացած է, կ'ըսեն, թեթևութեան քանակութիւնը կ'երեւակայէք անշուշտ. այս դասը կիրակի օրերը նաւամատոյցին վրայ կսպասէ, որ օրիորդ կամ տիկին ***ին հետ բարձրաձայն երկու բառ ֆրանսերէն խօսի :

Դաս մ' ալ կայ, որ առետտորի մէջ կորուսածն խաղի մէջ վաստակելու համար խորամանկութիւն կ'խորհի. հարուստներն ալ ունին այս ախտը, բայց անոնք բամբասանքէ գերծ են, վասնզի ինչոր ախտ է աղքատի համար՝ անմեղ գբօսանք կ'համարուի հարուստի համար :

Պզտիկ բացառութեամբ թէ՛ այրերն եւ թէ կիները պճնասէր են: Չափէն աւելի կարեւորութիւն կու տան հագուստներու, հետեւապէս այն, որ շքեղ հագուած է՝ կատարեալ մարդ է. իսկ այն, որ պարզ հագուած է՝ մարդ կոչուելու արժանի չէ: Ուր որ ալ ըլլայ, երբ կտեսնես կին մը, որ հովահարով մը դէմքը կ'հովհարէ, նոյն իսկ ձմեռուան ամենասաստիկ ցուրտ օրերուն մէջ. որ երեսները մէյ մը աջ մէյ մը ձախ կ'դարձունէ կէս ծիծաղով. որ մէջքը միշտ կ'կոտրաւ եւ երկու բոպէին անգամ մը գլուխը կը շտկէ. որ ձեռնոցները կը հանէ, նորէն կը դնէ, շրջագգեստը կ'շտկէ, շիանիք, կը կանգնի, նորէն շտկելու ջանք կ'ընէ, երբեմն բերանը բանալով դիտմամբ կ'խնդայ, որ ակոսները ցոյց տայ եթէ շխնդար՝ գիտցիր, որ բերանին մէջ ակոսայ չկայ հասկցիր, որ այդ կինը միջագիտցի է. իսկ երբ անոր քովը աղէկ հագուած երիտասարդ մը գտնուի ու հետը խօսակցի, երբեմն ֆրանսերէն բառեր գործածելով, այդ կնկան սիկարա հրանցունէ եւ քթին մէջ մտնելու չափ մօտենայ անոր՝ հագար ոսկիի գրաւ դիր, որ ատոնց երկուքն ալ միջագիտցի են. եթէ կորսնցնես հագար ոսկին՝ եկուր ինձմէ առ :

Արեւէն չայրելու համար՝ իգական սեռն, քիչ բացառութեամբ, երեսը բրինձի փոշի կը քսէ. բայց Միջագիտցի լուսինն արեւու չափ կ'իզի ըլլալուն պատճառով՝ գիշերներն ալ կը գործածէ այն փոշին, որուն ոմանք սկսած են հիմա թոմաթէս խառնել :

Միրասուն օրիորդները կամ տիկիներն երբ տուն մը այցելութեան երթան՝ սանդուխին երկրորդ աստիճանէն կ'երկնցնեն իրենց ոտներն եւ սպասաւորներու քաշել կու տան իրենց կօշիկներն, որպէս զի պզտիկ ոտներն ամենուն ցոյց տան. իսկ երբ ոտները մեծ ըլլան՝ սպասաւորներուն քաշել կու տան իրենց ձեռնոցները.

շատ մը կիներ ալ իրաւամբ քաշել տուած են իրենց ակռաները, որովհետեւ մեծ էին անոնք եւ մեծ ցաւ կ'ապստճառէին ... գեղեցկութեան :

Տիկիներէն ոմանք կոմսուհիներու կամ մարքիզուհիներու նմանելու համար ամեն հնարք ի գործ կ'դնեն: Երբ գաւակ մը բերեն աշխարհ՝ իսկոյն ստնտուի մը կ'յանձնեն զայն, վասն զի ազնուականութեան դէմ է, որ կին մը իւր գաւակին կաթ տայ: Արդեօք պիտի գա՞յ այն օրն, ուր սպասուհիներն բերեն իրենց տիկիներուն բերելիք գաւակներն ալ, որպէս զի փափկասուն տիկիներն ծննդաբերութեան ծանր գործէն ալ խալսին ... :

Միշագիւղցին ուրիշ թաղեցիներու բաղդատմամբ աւելի քաղաքավար է: Խնդում երես ունի. եթէ երբեմն տխուր տեսնես զինք՝ պատճառն թաղին ազգային վարժարանն է :

Գիւղիս կլիմայն չէգորք է. ո՛չ բարիք կը գործէ եւ ո՛չ չարիք. բնակիչներն ալ իրենց կլիմային պէս են :

Կան երիտասարդներ, որ ինքզինքնին միշտ բարձր դրից մէջ կ'գտնեն. եթէ ասոր պատճառը փնտռուի՝ դիւրին է համոզուիլ, որ այդ երիտասարդներն այդչափ բարձր չը պիտի կարծէին զիրենք՝ եթէ օդէն աւելի թեթեւ չըլլային:

Դժբախտաբար մեր ազգին մէջ շատերու բարձրանալուն գաղտնիքը բնական օրէնքով միայն կ'լուծուի: Ծանրերը միշտ գետնաքարշ կ'մնան եւ թեթեւները վեր կ'ելնեն: Այս գիւղին մէջ կան երիտասարդներ՝ որոց գլուխն եթէ չուան մը անցունենք՝ կրնանք զանոնք թռուցիկի պէս բարձրացունել ... օդին մէջ :

Աւելորդապաշտութիւն չկայ այս գիւղին մէջ. (ոսկին այս հաշուէն դուրս է). մանաւանդ թէ պակասապաշտութիւն կ'տիրէ հոս: Ամենէն աւելի պաշտուող կուռքը նորածնութիւնն է :

Ջբօսանքը շատ կսիրեն հոս. եթէ տան մը մէջ պարն սկսի՝ առ նուագն վեց օրէն կը վերջանայ. իսկ երբ ազգային խնդրոյ մը վրայ խօսք բացուի՝ կէս ժամէն աւել չտեսեր :

Ներքին բերքն է ելակ եւ բամբասանք: Ելակն ամեն տարի առատ չըլլար. իսկ բամբասանքն, որ շատ անձրեւէն կամ շատ երաշտութենէն վախ չունի՝ ամեն տարի առատ հունձք կու տայ: Շատ տեղերէն հոս կու գան՝ այս ապրանքէն գնելու համար :

Արտաքին բերքն է գողեր եւ ծովեզերքին վրայ շուներու դիակներ :

Բ.

ՔՈՒՄ ՔԱԲՈՒ

Կ. Պօլսոյ մէջ երկու Քում Քաբու կայ ներքին Քում Քաբու եւ արտաքին Քում Քաբու, ինչպէս Մասիսի մէջ երկու տեսակ լուր կայ ներքին լուր եւ արտաքին լուր: Մասիսին լուրերուն արտաքինը ներքինէն որոշելու համար, երբեմն ուշադրութիւն պէտք է, վասն զի շատ անգամ Ամերիկայի մէջ կնկան մը երեք գաւակ մէկէն բերելուն լուրը Մասիսի մէջ ներքին լուրերուն տակը կկարդացուի. ինչպէս որ ուրիշ լրագիրներու մէջ շատ անգամ պատահած են հացագործի մը էշն, որ երբ փողոցի մէջ գոայ՝ ներքին լուրերու մէջ կ'անցնի, իսկ երբ Պատրիարքարանի մէջ երգէ՝ ազգային լուր կ'ըլլայ: Իսկ Քում Քաբուներու մասին այս շփոթութիւնները չկան. ներքինն երբէք արտաքինին մէջ եւ արտաքինն ալ բնաւ ներքինին մէջ տեսնուած չէ: Բայց որովհետեւ առաջին անգամն է որ ներքին Քում Քաբուն երթալ պտըտիլ կ'ուզես՝ ես յանձն կ'առնեմ քեզի առաջնորդել :

Ժամը մէկ ու կէս է. Մահուսիյէյի շոգենաւն ալ ճիշդ մէկ ու կէսին կամուրջէն կը մեկնի Քում Քաբու երթալու համար: Վագէ, բայց կաղաչեմ ուշադրութիւն ըրէ՛, որ ծովը չիյնաս, երկաթեայ կամուրջէն փայտեայ կամուրջն անցած ատենդ. կիսնդրեմ, որ վերարկուդ ալ խնամքով կոճկես, վասն զի կամուրջին վրայ կան տեսակ մը մարդեր, որ գրպանդ կխառնեն եւ ինչ որ գտնեն հոն՝ կ'առնեն ... այս տեսակ մարդերու գաւառներու մէջ քայմագամ անունը կու տային անցեալները թուրք լրագիրները: Ժամը երկու զարկաւ, եւ շոգենաւը տակաւին տեղէն չշարժիր. համբերէ՛, հիմա կմեկնի. մեր երեսփոխանական ժողովն ալ ատեանը ժամը ճիշտ վեցին պիտի բացուի կժանուցանէ, եւ ատեանը ուրին կբանայ: Ահա նաւապետը երեւցաւ... վեր ելիր նստէ՛, որ հով առնես... նաւապետն ահա

վարտիքը կապեց. ձեռներն ալ լուանալուն պէս կմեկնիք...: Շուտ ըրէ՛,
աճապարէ՛ հովանոցդ բաց... շատ թրջեցա՞ր... վնաս չունի. ուրիշ անգամ երբ
շոգենաւր սուլել պատրաստուի՝ հովանոցդ բաց որ շոգիէն չթրջուիս... աչքդ լոյս,
ճանքայ ելաք... Սարայ պուրնուն դառնալնուդ պէս... բայց ինչո՞ւ կայնեցաք.
կարծեմ ածուխը հատաւ... Նաւապետն ինչո՞ւ չեն արթնցներ որ պէտք եղածը
նայի... նաւաստիներն ո՞ր են... ահա հոս են, սքանալի կխաղան. անոնք իրենց
տեղէն չեն երերար՝ մինչեւ որ հրաման չառնեն իրենց նաւապետէն, որ
չարթնար՝ մինչեւ որ իրեն ձայն չտրուի նաւաստիներէն, որ իրենց տեղէն չեն
երերար մինչեւ որ... (կրկնէ տասն անգամ) : Ահա ճանքորդներն, որ շարժելու
միտում ունենալ կը թուին ... Եթէ ածուխ չկայ՝ փառք Աստուծոյ հողմ կայ. հողմը
կարող է ածուխին պաշտօնը վարել. բայց առագաստ չկայ ... : Ինչո՞ւ ապշած
էք, պարոն ճանքորդներ. բացէ՛ք ձեր հովանոցները հողմին առջեւ, որ շոգենաւր
շարժի ... Ո՛չ, ո՛չ, համբերեցէք. ահա նաւակ մը, որ Քում Քաբու կ' երթայ. չուան
մը ձգեցէք որ շոգենաւն քաշէ. այդ թիավարները բարի անձեր են, ձեր խնդիրքը
չեն մերժեր, մանաւանդ թէ ձեր ուզածն ալ ինքնօրինութիւն չէ: Տեսէք ի՛նչ
եռանդով թի կքաշեն ... կէս ժամէն Քում Քաբուի նաւամատոյցը կհասնիք:
Վերջապէս հասար ... :

Բարեկամ, ձախ կողմդ դարձիր, բայց երկաթուղոյ գծին վրայէն մի՛ քալեր: Հիմա
աջ կողմ դարձիր եւ սա նեղ փողոցէն ներս մտի՛ր. քիչ մը քալելէդ ետքը
ինքզիքդ կը գտնես բարձր շէնքի մը առջեւ, ու երկու մարդ քու թեւերէդ կը բռնեն
եւ այդ շէնքէն բռնութեամբ ներս կը հրեն գրեց: Մի՛ վախնար, բան չկայ:
Ձախակողմեան սանդուղիսէն վե՛ր ելիր եւ բոլոր սենեակները պտըտէ՛, մէջը
մարդ չես կրնար տեսնել: Ինչո՞ւ. վասնզի բոլոր սենեակներուն դռներուն վրայ
հետեւեալը գրուած է. առանց գործոց ներս մտնելն արգիլեալ է : Ժամը չորս է,
բայց այս արգելքն խղճի մտօք կյարգուի: Քում Քաբուի մէջն ես, բարեկամ, եւ
այդ շէնքն ալ Պատրիարքարան է. Պատրիարքարան ըսուելուն բուն պատճառն
ալ անկանոն ընթացք մը ունենալն է: Պաշտօնեաները կը սկսին գալ. գրեց բռնող
երկու մարդերն կ' առաջնորդեն քեզի սենեակ մը՝ ուր սեւ աչերով, սեւ
ընթուիներով, կլոր եւ սիրուն դէմքով մարդ մը անուշութեամբ քու որպիսութիւնդ,
թաղդ, տարիքդ եւ արհեստդ հարցունելէն ետեւ կ' ըսէ.

Պարո՛ն, երեք տարուան ազգային տուրք պիտի վճարէք, եօթանասունըհինգէն՝ երկու հարիւր քսանեփնգ դահեկան :

Ներումն կխնդրեմ. եթէ գիտնայի որ ազգային տուրքդ վճարած չէիր՝ կյորդորէի գրեց Պատրիարքարանի փողոցէն շանցնելու. բայց որովհետեւ անգամ մը մտած ես հոն՝ պարտքդ տալու ես առանց վշտանալու, վասն զի իր պարտքը վճարելու անհոգութիւն ընողներուն համար Պատրիարքարանն ասկէ աւելի դիւրին ճամբայ չէր կրնար գտնել :

Պատրիարքարանէն դուրս ելնելուդ պէս՝ դիմացի դռնէն ներս մտիր. Մայր եկեղեցին է այն: Այս եկեղեցոյն մէջ ժամանակաւ ամեն օր Ս. Պատարագ կմատուցուէր, իսկ հիմա շաբաթը հազիւ մէկ անգամ պատարագ կ'ըլլայ հոն: Քսանը եօթը քահանայ ունի այս եկեղեցին, որոնք Եւնի Քաբուի եւ Կէտիկ բաշայի եկեղեցիներու մէջ ալ պաշտօն կը վարեն. սակայն չկարենալով իրենց օրական ապրուստը ճարել որովհետեւ շատ կ'ուտեն շատ անգամ իրենց ծովներուն տուները կմնան, անոնց ննջեցելոց հոգոյն համար կ'ուտեն կխմեն: Ասոր համար է, որ շատ անգամ եկեղեցոյն մէջ քահանայ չգտնուիր: Մայր Եկեղեցոյ բակը երկու գերեզման կտեսնես. ասոնց միոյն մէջ թաղուած է Տատեան Պօղոս ամիրայ եւ միւսին մէջ կրնանայ Պէզճեան Յարութիւն, որ երկու հազար դահեկան ամսական կտակած է Մայր Վարժարանին, հազար դահեկան ամսական արտաքին Քում Քաբուի վարժարանին եւ յիսուն դահեկան ամսական բանտի եկեղեցոյն. ասիտ՛ս որ ազգային լրագիրներուն համար եւ Պատրիարքարանի փոշիներուն մաքրուելուն համար բան մը չէ կտակած :

Եկեղեցոյն քովն է թաղին վարժարանը, որ համբաւատր եղած է իր յարուցած վեճերովը: Դասատուները շաբաթը մէկ անգամ կփոխուին հոս. ամեն օր նոր դասատու եւ նոր դրութիւն: Չար լեզուները կ'ըսեն, թէ այս վարժարանին մէջ ամենէն աւելի յարգ եւ պատիւ գտնող դասատուներն անոնք են, որ աշակերտներուն շատ թողթ, գրիչ, մելան եւ մատիտ սպառել տալու դրութիւնն կյարգեն, եւ այս դրութիւնը շատ հաճելի է եղեր Հոգաբարձութեան անդամներուն :

Մենք չենք ուզեր հաւատալ, բայց հաւատացողներուն ալ հաւատքը հերքելու չափ զօրատր փաստեր չունինք դժբախտաբար: Աստուած չընէ, եթէ

հոգաբարձուներէն մէկն դերձակ ըլլար՝ աշակերտները շաբաթը մէկ անգամ նոր հագուստ հագնելու պիտի ստիպուէին: Իսկ եթէ մէկն ալ սափրիչ ըլլար՝ անպատճառ հետեւեալ տողերը Ներքին Կանոնագրութեան մէջ պիտի անցնէին. « Աշակերտները պարտաւոր են օրը երեք անգամ կտրել տալ իրենց մազերը »:

Ո՛վ անձնանուիրութիւն, գոնէ անգամ մը քու երեսդ տեսնելու պատիւը պիտի չունենա՞նք: Տրտմիլ պէտք չէ. կեդրոնական գբօսարանը գնա քիչ մը որ բացուիս: Աջդ դարձիր, եւ դէմդ կելնեն երեք գբօսարան. մէջ տեղի գբօսարանը մտիր, որ սեղանի մը վրայ դրուած պիտի տեսնես ազգային քանի մը լրագիրներ, որոնց վրայ դրուած կան օղիի շիշեր եւ գաւաթներ: Թաղին բոլոր ազգասէրները հոս կյաճախեն եւ օղի խմելով ազգային կենսական խնդիրներու վրայ կխօսին: Ողջ ըլլան: Անդին քանի մը երիտասարդներ նստած, պրիճ եւ բրեճա կխաղան. ողջ ըլլան ու խաղան: Ասդին քանի մը անձեր ջերմ վիճաբանութեան մը բռնուած են. ասոնք թաղական խորհրդոյ անդամներ են եւ անանկ բարկութեամբ իրարու երես կպօռան, որ կարծես թէ ասոնցմէ մին եկեղեցիէն բան մը ծախած եւ ստակը ծոցը դրած է... առանց իւր ընկերներուն ինաց կան բաժին տալու: Ուրիշ մը բարձր ձայնով խաղ կկանչէ. վերջապէս խառնակութիւնը կթագաւորէ հոն: Սակայն այս կեդրոնական գբօսարանը դարձեալ շատ կանոնաւոր է այն ամեն բաներէն, որ կեդրոնական անունը ունին, ինչպէս կեդրոնական վարչութիւն, կեդրոնական սնտուկ, կեդրոնական վարժարան, որ տակաւին չբացուեցաւ :

Եթէ այս գբօսարանէն չախորժեցար՝ ծովու վրայ կառուցուած եւ Աճեմ - տաղի ըստած գբօսավայրը գնա՛. հոն հանդարտ գլուխով կրնաս նստիլ, վասն զի հոն թաղական խորհուրդ չկայ, եւ հետեւապէս, կոհի ալ չկայ: Գլուխդ վեր առ եւ սա պատուհանէն ներս նայէ՛. տե՛ս սա կինը, որ աղքատ ըլլալուն պատճառաւ Բուտրա չէ կրցած առնել եւ ալիւր կքսէ երեսներուն. խեղճ կնիկ...: Քալէ՛... նայէ. սա գեղեցիկ աղջիկը հաքիքճի ին հետ կխօսի դրան առջեւ. ի՞նչ կխօսի արդեօք... անշուշտ Հայկական խնդրոյն վրայ շխօսիր. կարմիր ներկ առած է առջի օրը եւ վճարելու դրամ չունի խեղճը... ի՞նչ խեղճութիւն: Ահա քանի մը հայ երիտասարդ ձկնորսներ գինետունէն ելած՝ երգելով կու գան. մի՛ վախճար, ասոնք մարդու չեն դպչիր, պատուաւոր կարծուած անձերէն շատ պատուաւոր են ասոնք, որ ստախօսութիւն, նենգութիւն եւ նախանձ բնաւ չունին: Ճանքաղ շարունակէ՛, եւ ահա Աճեմ-տաղի կոչուած գբօսավայրը հասար: Նստէ քիչ մը եւ

եկող պարոններն եւ օրիորդները դիտէ: Ա՛ն քեզի օրիորդ մը, որուն շրջագգեստը
իյնալու վրայ է, կ'երեւի որ աղէկ կապած չէ... սհա կին մը. որ կուրծքը բացած՝
տղուն կաթ տալով կամաց կամաց կու գայ խնդալով... ասդին նայէ՛, հարիւր
տեսակ գոյն կայ սա կնկան հագուստներուն վրայ: Երիտասարդները կսկսին
գալ: Քում Քաբուցին մեծաւ մասամբ հոս կյաճախէ, ուր շատ մը նշանտուք ներ
եւ խօսկապ ներ տեղի կ' ունենան ոչ - պաշտօնապէս: Երկու սեռերն հոս
նշանացի կխօսին իրարու հետ՝ երբ իրարմէ հեռու մնան, իսկ ականջէ ականջ
կխօսին՝ երբ իրարու մօտ լինին. բնութիւնը կարծես երբեմն ականջն աղջիկներու
այտերուն վրայ դրած է, վասն զի երբեմն երիտասարդները այտերուն վրայէն
կխօսին, իրենց խօսքն դիւրաւ լսելի ընելու համար: Այս տեսակ խօսակցութիւնն
շատերը քիչ մը տարօրինակ գտնելով՝ չեն ուզեր իրենց ընտանիքը հոն տանիլ :

Եթէ նեղուցար հոս՝ Պասմախանէ կոչուած գբօսարանը գնա՛ ... տե՛ս այրերու
եւ կիներու բազմութիւնը: Աջ կողմդ նայէ՛, Էրիկ կնիկ իրարու հետ կռուի բռնուած
են ... Էրիկը փայտով կապառնայ կնկանը՝ որ ապտակ կցցունէ Էրկանը ... երկու
տարու տղայ մ' ալ անոնց քովը նստած կու լայ ... կինը թաշկինակով
շրջագգեստը կարբէ. կարծեմ տղան մօրը գիրկը միգած է եւ պատճառ տուած է
վիճաբանութեան: Ընտանիքներու մէջ պզտիկ տղայներու մէզը մեր
երեսփոխաններուն հարցապնդումին կնմանի, միշտ վեճ կյարուցանէ :

Եկուր քիչ մ' ալ աղջիկներու վարժարանն երթանք, որ Լուսաւորչեան կկոչուի եւ
գոր, Տէր Սուրբիաս քահանայն կառուցած է 1868 - ին, ազգէն օգնութիւն
մուրալով: Սոյն վարժարանն ժամանակաւ երեք հարիւրի չափ աշակերտ ունէր,
իսկ հիմա որ տէր Սուրբիասէն առնուած եւ թաղական խորհրդոյ յանձնուած է՝
հազիւ ութսուն աշակերտ ունի: Կկարծուի որ հայերը չեն ուզեր աղջիկ գաւակ
ունենալ, աղջիկներու կանոնաւոր վարժարան մը չունենալուն համար :

Այս թաղին մէջը կան Մէգպուրեան, Սուրենեան եւ Ագոանեան վարժարաններ,
որոց առաջին երկուքը երկու սեռէ աշակերտներ կ' ընդունին, իսկ վերջինը միայն
իգական սեռէն կ' ընդունի ... Շիտակը խօսելով՝ հայրերն եւ մայրերը
անհոգութիւն չեն ըներ այս վարժարաններու տղայ հասցնելու համար: Այս
մասնաւոր վարժարաններուն ալ յաջողութիւն մաղթենք, քանի որ թաղային
վարժարաններէ յուսահատած ենք :

Թաղիս այրերը մեծաւ մասամբ արհեստաւոր եւ պատուաւոր մարդեր են, որ ժամանակաւ ազգային խնդիրներու մէջ մեծ դեր կ'խաղային, իսկ քանի մը տարիներէ ի վեր իրենց թաղային վարժարանին վեճերովը կ'զբօսնուն :

Ասոնք գրեթէ ընդհանրապէս սքիռիթիւալիսք են, ամենքն ալ օղի կ'խմեն, միայն թէ օղին տիւզ տեսակէն կ'գործածեն: Այս տեղի ժողովուրդն այնպէս համոզուած է, թէ օղին տեսակ մը ջուր է, որ տխրութեան վրայ թափուելուն պէս՝ ուրախութեան կ'փոխէ գայն: Տիւզը տարբեր եղանակներով կ'գործածուի հոն. ոմանք առանց ջուրի կ'խմեն. քիչ մը ջուր դնողներ ալ կան. են որ առաջ քիչ մը ջուրով կ'լուան իրենց բերանը եւ վերջը կ'խմեն օղին. ոմանք գաւաթով կ'խմեն, իսկ ոմանք շիշով, եւ մէկ քանիներ ալ տակառով: Գաւաթով խմողները կ'ծաղրուին ինչպէս օմէօբաթ բժիշկներն ալօբաթ ներէն :

Թէ՛ այրերը եւ թէ կ'իները շատ կ'սիրեն բաղնիքը. ձմեռը տաք բաղնիքներէն դուրս չեն ելներ, ամառն ալ ծովու բաղնիքներէն: Ամենքն ալ սազէ մը աւելի յաջողակութեամբ կ'լողան, բայց չափազանց տնտեսագէտ ըլլալնուն պատճառաւ՝ մինչեւ որ ութը ինը ժամ ծովու մէջ չմնան՝ բաղնեպանին վաթսուն բարա վճարելու համար դժուարութիւններ կ'հանեն: Խնայողութեան համար վեց ամիս Մեծ Պահք կ'բռնեն եւ լուբիայով ու ձէթով կ'անցունեն իրենց օրերը :

Առաջուան ջերմեռանդութիւնն անյայտ եղած է այս թաղէն եւ անոր յաջորդած է անտարբերութիւն աղօթքի մասին: Կիրակի առաւօտ մը գնա Մայր Եկեղեցին. ժողովուրդէն մարդ չ'պիտի տեսնես հոն. եթէ քահանայ մը տեսնես՝ մոմ մը վառէ եւ դուրս ելիր: Կ'իները միայն Ս. Ջատկին կամ Ս. Ծնունդին օրերը կ'երթան եկեղեցին, եւ այն ալ ոչ թէ աղօթելու համար, այլ իրարու հագուստներու վրայ դիտողութիւն ընելու, աղջիկներն մանչերու նշանելու եւ երբեմն ալ եկեղեցոյն մէջ գաւակ բերելու համար :

Իգական սեռը թուղթ բացող կնիկներու ալ կ'հաւատայ, պակլիա նետող խաթուններուն ալ. եթէ կին մը հորի դոյլ կորուսնէ՝ թուղթ բացողներու կողմէ կորուսած դոյլը գտնելու համար Թասօնիի՞ դիմելու էր. եթէ աղջիկ մը իւր սիրականը կորուսնէ՝ պակլիա նետել կու տայ: Այս նախապաշարումները շատ տուներու մէջ դեռ կ'տեսնուին :

Իգական սեռը հոս պճնասէր չէ, հագուստի մասին շատ դրամ չմսխեր. տարին անգամ մը Բերա կելնէ եւ Լուի Ֆիլիքի ժամանակէն մնացած գլխարկ մը կ' առնէ քառապատիկ գնով եւ յետ կը դառնայ. ասոր կ' ըսեն, հնաճեութիւն նորաճեութեան ... : Հագուստ վայելեցնելու համար ալ երկու - երեք ժամ հայելիին առջեւ մնալ չուզեր, հագուստն միմիայն իր անձը պաշտպանելու համար կը հագնի, եւ ասոր համար է, որ երբեմն գուլպաները սխալմամբ ձեռներուն կ' անցունէ եւ ձեռնոցներն ոտներուն: Ո՛րչափ երիտասարդներ կան, որ ասանկ աղջիկներ կ' փնտռեն: Աշխատասէր են. առաւօտէ մինչեւ երեկոյ կա՛մ կար կկարեն, կամ լաթ կլուան եւ կամ տախտակ կսրբեն. տեսակ մը աղջիկներու կամ կիներու պէս ծունկ ծունկի վրայ դրած պատուհանին առջեւ չեն նստիր շաբաթներով :

Այս թաղին մէջ կբնակի Պ. Մինաս Քաբամաճեան, ազգային երեսփոխան եւ Լոյս հանդէսին խմբագիր, որ խմբագրական տաժանելի ասպարէզին մէջ ազգին կծառայէ իր լուրջ եւ գաւեշտական յօդուածներով եւ սակայն դարձեալ պէտք եղած քաջալերութիւնը չգտներ: Հոս կբնակի նաեւ ազգային երեսփոխան եւ Հայրենիքի խմբագիր Պ. Մկրտիչ Մելիքեան, որ խմբագրական ծանր բեռան տակ կճնշուի: Չգիտեմ թէ այն ժողովուրդն, որ Հայրենիք մը չէ կարող ապրեցունել, իրաւունք ունի՞ Հայրենիք պօռալու ... : Հոս ծնած է Գերապատի Մատթէոս Եպիսկոպոս Իգմիրլեան. Պատրիարք կ' ուզէ ըլլալ եւ չի կրնար :

Այս թաղին սահմանն է արեւելքէն օղի, արեւմուտքէն գինի, հիւսիսէն քօնեաք, հարաւէն րօս. կկարծուի թէ Նոյ նահապետ Քում Քաբուցի էր :

Կառավարութիւնն ոչ սահմանադրական է, ոչ ալ միապետական. անհոգութիւնն է, որ կը վարէ թաղին գործերը :

Նշանատր է Մայր Եկեղեցոյ ջրհանկիրներու խումբը, որ կտրիճ երիտասարդներէ կազմուած է եւ մեծ պատիւ վաստակած է իր ճիւղին մէջ: Եթէ հարուստ ըլլայի՝ ամբողջ թաղ մը կրակի կու տայի՝ այս կտրիճներու վագելը տեսնելու համար :

Քում Քաբուն շատ խոնաւ է, բայց Քում Քաբուցին շատ առողջ է: Խոնաւութիւնը միմիայն անոնց լաթերուն վնասած է, եւ եթէ երբեմն Քում Քաբուցի մը տեսնես,

որ բորբոսած հագուստով կը վագէ՛ հասկացիր, որ ասոր պատճառն
խոնաւութիւնն է :

Մոռցանք յիշելու, որ այս թաղին մէջ հագար երկու հարիւր տուն հայ կայ եւ երկու
հագար չորս հարիւր գինետուն, այսինքն տուն գլուխ երկու գինետուն. բայց
թաղեցին այս թիւն գոհ չըլլալով՝ բողոքած է, եւ իւր բողոքն ալ նկատողութեան
առնուելով որոշուած է հագար գինետուն եւս աւելցունել :